քական օգնութիւն, որ նշանակում է եղբայրական փոխադարձ օգնութիւն։ Հրաւիրուած գիւղացիք ամենայն սիրով և պատրաստականութեամբ գալիս են իրենց բահ ու բրիչներով, իրենց ուրագ ու կացիններով և խմբովին աշխատելով, մի երկու օրում, նոր տուն են շինում և ապա գոհ սրտով գնում են իրենց տները։ Այս հաւաքական օգնութիւնը և եղբայրական փոխադարձ աջակցութիւնը գիւղացիք անտրտունջ կատարում են այն մարդկանց համար, որոնք իսկապէս օգնութեան և աջակցութեան կարօտ են՝ թէ վարուցանքի, թէ հնձի և թէ ուրիշ ծանր աշխատանքների ժամանակ։ Հարկաւ «իմեաջի»— հաւաքական օգնութիւն հասնող գիւղացիների ուտելն ու խմելը հոգում է հրաւիրող և եղբայրական օգնութիւն խնդրող գիւղացին։ Ահաւասիկ ձեզ ճշմարիտ քրիստոնէութեան վայել ընկերասիրութեան և փոխադարձ հաւաքական օգնութեան սքանչելի մի սովորութիւն, որ իրրև մի ընտիր օրինակ և գեղեցիկ կաղապար կարող է լինել մեր բոլոր Հայ գիւղացիների համար։ Միայն ցաւ ի սիրտ պիտի ասեմ՝ ափսո՞ս և հազար փսոս, որ այսպիսի ընտիր յատկութիւններով օժտուած և երկրագործութեան սիրահար մի բուռն Հայ ժողովուրդը խարխափում է անսահման տգիտութեան և թանձրը խաւարի մէջ։ Գոնէ այսուհետև շատ ու շատ ցանկալի է, որ մեր բանասէրներն ու հնագէտները, մեր բանիմացներն ու գրագէտները շրջէին Ուտիացոց աշխարհում, ուսումնասիրելով՝ հետազօտէին նրանց անցեալն ու ներկան և ապա այս